

հալի վարդապետը, որ Յակոբայ Առաքելոյն կաթողիկեայց թըղ-  
թին մեկնութեան գրքին վերջին յորդորակին մէջ, հետեւեալ  
կերպով կ'արտայայտուի. «Եւ ես սակս այնորիկ զԵրուսաղէմ  
սիրեմ եւ դովեմ եւ երանեմ, զի այսպիսի զանազանութիւնք  
չնորհացն Աստուծոյ եղեն անդ»:

Երանի՛ր անոր որ կը զգայ ու կը գնահատէ Ս. Տեղեոց մէջ  
Աստուծոյ շնորհաց զանազանութիւնները եւ կ'արժանաւորի անոնց:



## Բ

### ՀԱՅՈՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ ԲԵԹՂԵՀԷՄԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՎՐԱՅ

#### Նոյն Վանքին Հաստատութիւնը

1. Մեր այս յօդուածը պիտի ունենայ երեք հատուած. Ա.—  
Ծանուցուած վանքին և եկեղեցւոյն հաստատութիւնը. Բ.—  
Անոր հայկական վերաշինութիւնը, ձեռագիր «ճառընտրի» մը  
համաձայն, Գ.— Նոյն վանքին յիշատակութիւնը Սաղիմական  
ծիսարանաց մէջ: Երուսաղէմի մէջ կամ դուրսը գտնուած բոլոր  
եկեղեցիներն և ուխտատեղիները կառուցուած են ի պատիւ Քրի-  
ստոսի տնօրինական գործերուն, ինչպէս նաև Ս. Կուսին եւ  
կամ Ս. Սաչի յիշատակին. յետոյ հիմնուած են տաճարներ՝  
սուրբերու անունով: Սրբավայրերն և տօներն նախապէս միայն  
Երուսաղէմի յատուկ էին, տեղական բնոյթ ունէին. համանման  
հաստատութիւններ և տօնակատարութիւններ չորրորդ դարուն  
միայն տարածուեցան քրիստոնեայ աշխարհին մէջ: Ի հնումն ին-  
չ՞ու շինուած էր Բեթղեհէմի ճանապարհին վրայ գտնուած վան-  
քը: — Երուսաղէմէն Բեթղեհէմ վեց հոռմէական մղոն կը հաշ-  
ուուի հին ճանապարհով. վերոյիշեալ Ս. Աստուածածնի վանքը  
կառուցուած էր Բեթղեհէմի ճանապարհին վրայ, Երուսաղէմէն